


1.2 Արտադրություն (ծառայություններ)

1.2.1. Արդյունաբերություն

Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը: 2005թ. հունվար-ապրիլին հանրապետությունում, ըստ 2068 արդյունաբերական կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև ամենամսյա վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), ընթացիկ գներով, թողարկվել է 194084.3 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 193336.0 մլն. դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 19458.8 մլն. դրամի, այլ երկրներում՝ 52011.0 մլն. դրամի արտադրանք:

2004թ. հունվար-ապրիլի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 102.6%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման՝ 101.2%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան տոկոսներով 2003թ. դեկտեմբերի նկատմամբ



Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան

(%)

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2004թ.			
հունվար	81.6	91.1	81.6
փետրվար	102.6	98.1	83.7
մարտ	120.1	111.3	100.5
ապրիլ	96.9	119.3	97.4
մայիս	95.7	91.2	93.2
հունիս	106.7	106.0	99.4
հուլիս	99.3	98.4	98.7
օգոստոս	105.9	98.6	104.5
սեպտեմբեր	98.9	92.4	103.4
հոկտեմբեր	99.7	97.9	103.1
նոյեմբեր	101.1	100.9	104.2
դեկտեմբեր	103.6	106.9	108.0

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

	Նախորդ ամսվա նկատմամբ	Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ	Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ
2005թ.			
հունվար	84.8	100.7	84.8
փետրվար	105.7	110.1	89.6
մարտ	108.5	103.7	97.2
ապրիլ	101.8	96.3	98.9

**Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը
ըստ տնտեսական գործունեության տեսակների¹**

	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով ² , մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով ² , մլն. դրամ	2005թ. հունվար-ապրիլին, արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը 2004թ. հունվար- ապրիլի նկատմամբ (համադրելի գներով), %
Ամբողջ արդյունաբերությունը	194084.3	193336.0	102.6
<i>այդ թվում՝</i>			
Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում	38713.3	38713.3	110.5
<i>որից՝</i>			
Էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	36183.5	36183.5	112.0
<i>որից՝</i>			
Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում	29777.6	29777.6	104.3
գազակերպ վառելիքի արտադրություն և բաշխում	6405.9	6405.9	169.5
ջրի հավաքում, մաքրում և բաշխում	2529.8	2529.8	93.7
հանքագործական արդյունաբերություն	37825.7	34164.6	96.8
<i>որից՝</i>			
մետաղե հանքաքարերի արդյունահանում	37243.4	33605.9	96.6
հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր	582.3	558.7	113.4
ձշակող արդյունաբերություն	117545.3	120458.1	102.3
<i>որից՝</i>			
սննդամթերքի, ներառյալ խմիչքների, արտադրություն	47922.0	52380.2	91.6
ծխախոտային արտադրատեսակների արտադրություն	4469.8	4573.1	119.5
մանածագործական արտադրություն	752.2	625.9	103.9
հագուստի արտադրություն, մորթու ձշակում և ներկում	467.6	432.6	64.3
կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշիկների արտադրություն	69.8	76.6	91.3
բնափայտի ձշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն	335.8	337.1	102.3
հրատարակչական գործ, տպագրական վերարտադրում	1990.3	1913.2	100.7
քիմիական արդյունաբերություն	4587.2	1821.7	102.6
ռետինե և պլաստմասսայե արտա- դրատեսակների արտադրություն	782.2	775.5	116.2
այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն	4648.9	4641.8	110.7


¹ Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշները ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր 1210-201):

² Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

1. ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ


	Արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ծավալը, ընթացիկ գներով ¹ , մլն. դրամ	Պատրաստի արտադրանքի իրացումը, ընթացիկ գներով ¹ , մլն. դրամ	2005թ. հունվար-ապրիլին, արտադրանքի (աշխատանքների, ծառայությունների) ֆիզիկական ծավալի ինդեքսը 2004թ. հունվար-ապրիլի նկատմամբ (համադրելի գներով), %
մետաղագործական արդյունաբերություն	39832.2	41545.0	148.2
պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն	1257.2	1253.2	152.1
մեքենաների և սարքավորանքի արտադրություն	1812.6	1547.4	139.0
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	5326.7	4908.6	87.7
գործունեության այլ տեսակներ	3290.8	3626.2	80.3

Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների, 2005թ. հունվար-ապրիլին



- Մշակող արդյունաբերություն
- Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում
- Հանքագործական արդյունաբերություն


Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում



- Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում
- Գազակերպ վառելիքի արտադրություն և բաշխում
- Ջրի հավաքում, մաքրում և բաշխում


¹ Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և սկզբիցային հարկերի:

Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում




■	Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն
1.	հիդրոէլեկտրակայաններում
2.	ջերմաէլեկտրակայաններում
3.	ատոմային էլեկտրակայանում
■	Էլեկտրաէներգիայի հաղորդում և բաշխում էլեկտրացանցերի կողմից

Հանքագործական արդյունաբերություն



■	մետաղե հանքաքարերի արդյունահանում
■	հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր

Մշակող արդյունաբերություն



- 1-սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն
- 2-ծխախոտային արտադրատեսակների արտադրություն
- 3-մանածագործական արտադրություն
- 4-հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում
- 5-հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում
- 6-քիմիական արդյունաբերություն
- 7- այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն
- 8-մետաղագործական արդյունաբերություն
- 9-պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն
- 10-մեքենաների և սարքավորանքի արտադրություն
- 11-ոսկերչական արտադրատեսակների արտադրություն
- 12-գործունեության այլ տեսակներ

2005թ. հունվար-ապրիլին արտադրված (հաշվառվող) 112 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 54 -ի գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել 2004թ. նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում՝ արտադրատեսակական նշանակության արտադրանքի՝ 60 -ից 27 -ի և սպառողական ապրանքների՝ 52 -ից 27 -ի գծով:

Սպառողական ապրանքների արտադրության ծավալները¹

(մլն. դրամ)

	Փաստացի թողարկումը հունվար-ապրիլին		Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, %
	2005թ.	2004թ. ²	
Սպառողական ապրանքներ, ընդամենը	59865.6	66344.5	90.2
<i>այդ թվում՝</i>			
պարենային ապրանքներ	36441.7	37147.3	98.1
ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը)	9885.3	13640.7	72.5
ոչ պարենային ապրանքներ, ընդամենը	13538.6	15556.5	87.0
<i>այդ թվում՝</i>			
թեթև արդյունաբերության ³	3259.0	4341.0	75.1
նշակութակենցադային և տնտեսական նշանակության	10279.6	11215.5	91.7

Սննդամթերք, ներառյալ խմիչքներ և ծխախոտ արտադրող կազմակերպությունների
թողարկած հիմնական արտադրատեսակները⁴

	2005թ. հունվար- ապրիլ	2004թ. հունվար- ապրիլ	2005թ. հունվար-ապրիլը 2004թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %
Միս ⁵ , տոննա	12006.0	11911.4	100.8
Սսամթերք, ներառյալ երշիկեղեն, տոննա	398.1	303.0	131.4
Պանիր ⁵ , տոննա	1406.7	1393.6	100.9
Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի) ⁵ , տոննա	81133	75412	107.6
Պաղպաղակ, տոննա	209.7	233.6	89.8
Պահածո, տոննա	879.8	88.2	10 անգամ
Ալյուր, տոննա	45048.3	48619.5	92.7
Չավարեղեն, տոննա	307.4	-	-
Հաց և հացամթերք, հազ. տոննա	98.0	98.0	100.0
Հրուշակեղեն, տոննա	1275.6	1131.9	112.7
Սակարոնեղեն, տոննա	849.7	645.0	131.7
Շաքարավազ, տոննա	771.0	-	-
Բուսական յուղ, տոննա	70.2	249.0	28.2
Օղի և օղու-լիկյորի արտադրանք , հազ. լիտր	3629.6	3102.3	117.0
Կոնյակ, հազ. լիտր	2163.5	2373.4	91.2
Գինի, հազ. լիտր	751.3	857.6	87.6
Շամպայն գինի, հազ.լիտր	75.9	89.0	85.3
Գարեջուր, հազ. լիտր	2039.9	1776.4	114.8
Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ. լիտր	6691.7	8301.0	80.6
Բնական հյութեր, հազ.լիտր	1235.9	1433.4	86.2
Հանքային ջրեր, հազ. լիտր	6571.6	5757.9	114.1
Աղ, տոննա	10065.7	8514.4	118.2
Սիգարետներ, մլն.հատ	795.9	669.5	118.9
Ֆերմենտացված ծխախոտ, տոննա	115.3	390.3	29.5

¹ Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:

² 2004թ. սպառողական ապրանքների արտադրության ծավալը հաշվարկված է 2005թ. գներով:

³ Ներառյալ պատվիրատուի հունքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

⁴ Այստեղ և հետագայում բերված տեղեկատվությունը առավել մանրամասն գետեղված է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-202):

⁵ Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը): Ներառյալ պատվիրատուի հունքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

Մանածագործական և կարի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2005թ. հունվար-ապրիլ	2004թ. հունվար-ապրիլ	2005թ. հունվար-ապրիլը 2004թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %
Բամբակյա գործվածքներ, հազ. մ ²	62.4	47.7	130.8
Գորգեր և գորգեղեն, մ ²	9881	9281	106.5
Գուլպեղեն, հազ. զույգ	74.1	74.1	100.0
Տրիկոտաժեղեն, հազ. հատ	572.0	457.0	125.2
Կարի արտադրանք ¹ , մլն. դրամ	2024.1	3216.3	62.9

2005թ. հունվար-ապրիլին **քիմիական** արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից պլաստմասսայե արտադրատեսակների արտադրությունը 2004թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ավելացել է 61.4%-ով, քիմիկադեղագործական արտադրանքինը՝ 29.3%-ով, լվացող, մաքրող և օսլայող միջոցներինը՝ 18.0%-ով, սինթետիկ կաուչուկինը՝ 2.2%-ով, իսկ լաքաներկանյութերի և կաուստիկ սողայի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար՝ 10.0 և 10.2%-ով:

Ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությամբ և հանքարդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2005թ. հունվար-ապրիլ	2004թ. հունվար-ապրիլ	2005թ. հունվար-ապրիլը 2004թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %
Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, մ ³	5137	4949	103.8
Ապրանքային բետոն, մ ³	14643	14088	103.9
Երեսպատման սալեր բնական քարից, մ ²	40611	33709	120.5
Ոչ հանքային շինանյութեր, մ ³	82393	79798	103.3
Կիր, տոննա	2365	105	22.5 անգամ
Ցեմենտ, հազ. տոննա	124.9	103.0	121.3
Գաջ, տոննա	8780	11268	77.9
Ուղիղ կտրվածքի տուֆ, մ ³	7971	9065	87.9
Ծակոտկեն լցանյութեր, մ ³	6605	13439	49.1
Ալյումինե և մետաղապլաստիկ իրեր, մ ²	10242	15928	64.3

Մետաղագործական արդյունաբերության կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանում 2004թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կոնվերտորային (սև) պղնձի արտադրությունն ավելացել է 2 անգամ, ցինկի խտանյութինը՝ 90.0%-ով, իսկ պղնձի խտանյութում պղնձի և մոլիբդենի խտանյութի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար՝ 6.1 և 7.6%-ով:

¹ Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):

Պատրաստի մետաղե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի ու էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

	2005թ. հունվար-ապրիլ	2004թ. հունվար-ապրիլ	2005թ. հունվար-ապրիլը 2004թ. հունվար-ապրիլի նկատմամբ, %
Մետաղահատ հաստոցներ, հատ	1	101	1.0
Ուելներ, հատ	102138	102642	99.5
Ուժային ճկուն կաբելներ, կմ	1.4	1.9	73.7
Տեղակայման հաղորդալարեր, կմ	43.6	42.1	103.6
Էմալպատ լարեր և փաթութալարեր, տոննա	13.1	6.5	2 անգամ
Էլեկտրաեռակցման սարքավորումներ, հատ	3700	3220	114.9
Լուսավորման էլեկտրալամպեր, հազ. հատ	923.2	-	-
Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ	626	2355	26.6
Ուժային տրանսֆորմատորներ, հատ	1	116	0.9
63-355 մմ բարձրությամբ պտտման առանցքով փոփոխական հոսանքի էլեկտրաշարժիչներ, հատ	-	171	-
0.5-100 կՎտ հզորության փոփոխական հոսանքի զեներատորներ, հատ	-	20	-
Համակարգիչներ, հատ	792	556	142.4
Ջրային հաշվիչներ, հատ	48	229	21.0
Էլեկտրական հաշվիչներ, հատ	310	1674	18.5
Սառնարանային ցուցափեղկեր, հատ	49	42	116.7
Պոմպեր, հատ	113	215	52.6

Ընդհանուր առմամբ, 2005թ. հունվար-ապրիլին հանրապետությունում թողարկվել է 2378.8 մլն. կՎտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2004թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 107.3%-ը: Ընդ որում, ՀԱԷԿ-ում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 10.8% -ով, ՋԷԿ-երում՝ 37.8% -ով, իսկ ՀԷԿ-երում՝ նվազել է 25.4% -ով:

2005թ. հունվար-ապրիլին ՀԱԷԿ-ը թողարկել է 1054.6 մլն. կՎտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հաշվետու ժամանակաշրջանում հանրապետությունում թողարկված ամբողջ էլեկտրաէներգիայի 44.3% -ը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար, 828.3 մլն. կՎտ ժամ և 34.8%-ը, ՀԷԿ-երը՝ 495.9 մլն. կՎտ ժամ և 20.9%-ը:

2005թ. հունվար-ապրիլին հանրապետությունում թողարկվել է 149.1 հազ.Գկալ ջերմային էներգիա, որը կազմել է 2004թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 62.9%: